ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 թ.
№ 18 (1116)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 57-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանի շնորհավորական ուղերձը Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ

Սիրելի՛ աբովյանականներ

Ավարտին է մոտենում 2023 թվականը: Այն բուհի համար աչքի ընկավ ինչպես դժվարություններով և բարձրագույն կրթության ոլորտի նոր մարտահրավերներով, այնպես էլ նոր նախաձեռնություններով ու գաղափարներով:

Անցնող տարում կյանքի կոչվեցին ուսումնական և գիտական, ուսանողական և միջազգային մի շարք ծրագրեր: Դրանք մեզ պարտավորեցրին սահմանել կրթության կազմակերպման նոր նշաձող՝ համընթաց քայլելու մանկավարժական բարձրագույն կրթության առկա մարտահրավերներին և պահանջներին:

Մեկդարյա պատմություն ունեցող բուհն արդեն իսկ ապացուցել է՝ մեր առաքելությունն անփոփոխ է, դա իրագործելու օրակարգը՝ անշեղ:

Մանկավարժն այսօր առավել, քան երբևէ, երկրի համար թիվ մեկ մասնագետն է, բոլոր մասնագետներին սովորեցնողը, վաղվա երաշխավորը: Եկեք ինքներս մեզնից սկսենք մանկավարժի, ուսուցչի բարի համբավը վերարժևորելու գործը, անտրտունջ և միասնական ջանքերով հաղթահարենք կրթական համակարգի փոփոխություններն ու առաջարկները. այդ է պահանջվում ժամանակակից ուսուցչից:

Սիրելի՛ ապագա մանկավարժներ, հազարավոր ուսուցիչներ հպարտությամբ են կրում իրենց վեհ կոչումը: Համալրե՛ք նրանց շարքերը, զինվորագրվե՛ք այդ հզոր բանակին, որի զենքն անվրեպ է մեր երկրի ապագա քաղաքացուն կերտելու ու կրթելու կարևորագույն գործում:

Տարեմուտը լավ առիթ է ամփոփելու անցնող տարին, բայցև նախանշելու հաջորդ տարվա անելիքները, ուղիները: Եկեք յուրաքանչյուրս մեր տեղում ամենօրյա աշխատանքով և պատասխանատվության ավելի բարձր զգացումով մոտենանք կրթությանը, աշխատանքին՝ ի նպաստ հայրենիքի խաղաղ ու բարօր ապագայի. մենք պարտավոր ենք հարատևել, ավելին՝ հզորանալ:

Վստահեցնում եմ, որ Մանկավարժական համալսարանի ղեկավարությունը կշարունակի իր ուսանողակենտրոն քաղաքականությունը, կբազմապատկի իր ջանքերը՝ կյանքի կոչելու առաջընթաց ապահովող ծրագրերը:

Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ:

Մաղթում եմ խաղաղություն և առողջություն, սեր և երջանկություն, ուրախ օրեր և նվաճումներ:

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում դեկտեմբերի 20-ին կայացավ Հոգաբարձուների խորհրդի նիստը:

Նիստը վարում էր ՀՊՄՀ Հոգաբարձուների խորհրդի նախագահ, ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը:

Օրակարգային հարցերին անցնելուց առաջ Խորհրդի անդամները դիտեցին ֆիլմ- հաշվետվություն մանկավարժական կրթության ոլորտում համալսարանի՝ տարբեր ուղղություններով զարգացումների ու առաջընթացի, ուսանողակենտրոն գործունեության մասին: Անդրադարձ արվեց տարվա ընթացքում բուհում կատարված աշխատանքներին. կրթական բոլոր նորարարական ծրագրերի և ուսուցման ձևերի կիրառմամբ համալսարանն ապահովել է մրցունակ կադրերի պատրաստում:

Տարին հատկապես ակտիվ էր միջազգային արդյունավետ գործունեության առումով. անդրադարձ արվեց գործընկերային կապերի և աշխարհագրության ընդլայնմանը, միջպետական նոր հուշագրերի ու պայմանագրերի ստորագրմանը, հանգամանորեն ներկայացվեց բուհի գիտական գործունեությունը, մանկավարժների վերապատրաստումները, ֆակուլտետների ուսումնական գործընթացներում նոր հաջողությունները, ուսանողական համայնքի հետաքրքիր նախաձեռնությունները, կամավորական աշխատանքը և այլն:

Ավելի քան մեկդարյա պատմություն ունեցող բուհը հավատարիմ է իր առաքելությանը՝ մանկավարժական բարձրորակ կադրերի պատրաստման գործում շարունակ իրականացնելով բարեփոխումներին միտված գործընթացներ:

Ռեկտոր Սրբուհի Գևորգյանը մեջբերեց ՀՀ ԳԱԱ 80-ամյակի նիստում ԿԳՄՍ նախարար, ՀՊՄՀ Հոգաբարձուների խորհրդի նախագահ Ժաննա Անդրեասյանի շնորհավորական խոսքից մի հատված, որտեղ նախարարն ընդգծել է, որ գիտության, կրթության, հետազոտականության, կրթական չափորոշիչների, աշակերտի և ուսանողի մեկտեղման զարգացումով է պայմանավորված մեր երկրի ապագան: Ռեկտորն ընդգծեց՝ հենց դրանով էլ պայմանավորված՝ Մանկավարժական համալսարանն իրականացրել է իր գործունեությունը՝ ուսանողի պահանջմունքով, մանկավարժական կրթության հետազոտական, մասնագիտական զարգացման ընդհանուր որակներով, հավատարմագրման գործընթացի հստակ վերանայումներով շեշտադրված:

Ռեկտորը ներկայացրեց, որ բուհում առաջին անգամ որակի գործընթացի կազմակերպմանն ուղղահայաց մեծ աշխատանք տարվեց, որի համապատասխանությունը վերջնարդյունք-

➤2

Տարեվերջյան հանդիպում ուսանողական ակտիվի հետ

Արդեն ավանդական դարձած հանդիպման սկզբում ռեկտոր Գևորգյանը հույս հայտնեց, որ կծավալվի անկեղծ և բաց երկխոսություն՝ ուսանողի, նրա գործունեության, մասնագիտական և անձնային աճի, ուսումնական գործընթացների կազմակերպման որակական խնդիրների, նաև ուսանողների ձեռքբերումների մասին: Նա վստահեցրեց՝ ուսանողը բուհի բարձրագույն արժեքն է, պատրաստ է լսել առաջարկներ, կարծիքներ՝ բուհական կյանքի արդյունավետ և որակյալ կազմակերպման համար:

Սրբուհի Գևորգյանը հետաքրքրվեց, թե ինչպիսին է Մանկավարժական համալսարանում կյանքը ուսանողի համար՝ մասնագիտական գործունեության, ժամանցային, հասարակական ատիվության, բուհի մյուս գործընթացներում համամասնակցային դրսևորման տեսանկյունից:

Ռեկտորն ընդգծեց՝ բուհը ներգրավված է բազմաթիվ միջոցառումներում, համալսարանում կարևորում են ուսանողի ցանկացած ձեռքբերում, մասնակցությունն այդ գործընթացներին:

Ուխ փոխնախագահ Կարինե Ավալյանն ուսանողների անունից վստահեցրեց՝ Մանկավարժականում ուսանողն իրեն հարմարավետ է զգում. այդ մասին է վկայում նաև տարվա ընթացքում ղեկավար կազմի հետ հաճախակի հանդիպումները՝ բաց ու թափանցիկ հարցադրումներով և պատասխաններով:

Հանդիպման ընթացքում Սրբուհի Գևորգյանը պատասխանեց ուսանողներին հետաքրքրող մի շարք հարցերի՝ լսարանների տեխնիկական հագեցվածության, անհրաժեշտ լաբորատոր գործիքների պակասի լրացման, դասավանդման ձևաչափի արդյունավետ կազմակերպման, մասնագիտական գույքի տրամադրման, միջազգային ծրագրերում ներգրավվածության վերաբերյալ և այլն:

Բուհի ղեկավարը վստահեցրեց՝ ուսումնական գործունեությունը պատշաճ կազմակերպելու և որակյալ կրթություն ապահովելու համար պատրաստակամ են անհրաժեշտ ֆինանսական ներդրումներ կատարել:

Ուսանողական խորհրդի նախագահ Պարույր Գալստյանը շնորհակալություն հայտնեց բուհի ղեկավարությանը՝ ուսանողի կողքին մշտապես լինելու, աջակցելու և բարձրացրած հարցերին լուծումներ տալու համար:

Սրբուհի Գևորգյանը ողջ համակազմի անունից շնորհակալություն հայտնեց բուհի ուսանողին՝ տեսակի, յուրահատուկ հմայքի և անկեղծության համար՝ նշելով, որ դասախոս-ուսանող երկու հիմնարար գործոնի բնականոն ներգործությամբ և սերնդափոխությամբ է պայմանավորված կրթական հաստատության կայունությունը:

Ռեկտոր Սրբուհի Գևորգյանը հավաստագրեր հանձնեց Լեռնային Ղարաբաղից արցախահայության բռնի տեղահանության հետևանքով ՀՀ-ում մեր հայրենակիցներին աջակցություն տրամադրելու կամավորական աշխատանքներում ներգրավված ուսանողներին:

Նա շնորհակալություն հայտնեց ուսանողներին՝ մասնագիտական գործունեությունը բուհի հետ կապելու, մարդկային որակների, մասնագիտական հմտությունների, համալսարանին հեղինակություն բերելու համար՝ ուրախությամբ նկատելով՝ Մանկավարժականը հուսալի ձեռքերում է:

Մարին ԱՂԵԿՅԱՆ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ

➢1 ներին ներկայացված է՝ որակի ազգային շրջանակ, որակի ոլորտային շրջանակի ցուցիչներ, մասնագիտական կրթական ծրագրեր, առարկայական նկարագրեր, դասընթացներ և վերջնարդյունքների համադրելիություն... Այդ բոլորի մեջ նորից ուսանողն է՝ իր պահանջմունքներով ու մասնագիտական որակի ձևավորման կարողություններով:

Ռեկտոր Սրբուհի Գևորգյանը Խորհրդի անդամներին ներկայացրեց Մանկավարժական համալսարանի 2023 թվականի տարեկան հաշվետվությունը, 2023 թվականի ֆինանսական հաշվետվությունը և 2024 թվականի բյուջեն, որոնք հաստատվեցին Խորհրդի անդամների կողմից:

Խորհրդի անդամների կողմից հարցեր հնչեցին՝ կապված պրոֆեսորադասախոսական կազմի աշխատավարձերի հետ: Ժաննա Անդրեսյանի կարծիքով մանկավարժական կրթության ֆինանսավորման քաղաքականությունը վերանայման կարիք ունի: Պետք է քննարկել կրթական ծրագրերի բովանդակությունը, ցանկը՝ հասկանալու ժամանակակից միտումները: «Ըստ կրթության զարգացման պետական ծրագրի ուղերձի՝ մենք այս բուհերի մասով նախատեսում ենք, որ պետության ֆինանսավորումը պետք է լինի շատ ավելի զգալի»,- ասաց նախարարը՝ անդրադառնալով նաև միջանկյալ լուծումներին:

ՀՊՄՀ միջազգային հարցերի և աշխատակազմի պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը հաստատման ներկայացրեց 2024 թվականի հաստիքացուցակը՝ կառուցվածքային նոր փոփոխություններով: Խորհրդի անդամներն ընդունեցին ի գիտություն:

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեսյանը շնորհավորեց բոլորին՝ գալիք Ամանորի առթիվ, ընդգծելով վերջին տարիների դժվարությունները:

Նա շնորհակալություն հայտնեց համալսարանի ղեկավարությանը, պրոֆեսորադասախոսական կազմին և ուսանողությանը՝ այդ դժվարին ժամանակներում երկրի մարտահրավերներին ընդառաջ գնալու, հոգեբանական աջակցությամբ և կամավորական աշխատանքնով բռնի տեղահանվածներին աջակցելու համար:

Ժաննա Անդրեսյանը երկրին մաղթեց խաղաղություն, բոլորին ուժ և կորով՝ մարտահրավերներին դիմակայելու համար:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Սպացան վերապատրաստման դասընթացի վկայագրեր

Ավարտվեցին նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների 110 ժամաքանակով պարտադիր վերապատրաստման դասընթացները: Ի դեպ, դասընթացի մասնակիցներից շատերը Մանկավարժական համալսարանի շրջանավարտներ էին:

Դասընթացների ավարտի կապակցությամբ դեկտեմբերի 22-ին Մանկավարժական համալսարանի հարկի ներքո էին հավաքվել վերապատրաստված մանկավարժ դաստիարակները՝ ստանալու հավաստագրեր:

Ավարտի կապակցությամբ նրանց շնորհավորեց Ուսումնագիտական գծով պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը: Պրոռեկտորն ընդգծեց, որ այս գերատեսչության աշխատողների համար առաջին անգամ էր համալսարանը վերապատրաստումների թույլտվություն ստացել և ամենայն պատասխանատվությամբ վերաբերվել գործընթացի կազմակերպմանը:

Պրոռեկտորը համոզված է՝ դասընթացները նպաստել են վերապատրաստվածների գիտելիքների ու կարողությունների լավարկմանը, և որ ձեռք բերած նորարարական գիտելիքները մանկավարժական աշխատողները կկիրառեն իրենց աշխատանքի ընթացքում: Նա շնորհավորեց բոլորին, և վստահեցրեց, որ Մանկավարժական համալսարանը մշտապես պատրաստ է խորհրդատվություն տալ, աջակցել և օժանդակել գրականությամբ:

Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Արմենուհի Մանուկյանը շնորհավորեց դասընթացի կազմակերպիչներին, դասախոսներին՝ մաղթելով առողջություն և ավյուն, որպեսզի կարողանան շարունակաբար իրենց գիտելիքները փոխանցել ոլորտի լավագույն մասնագետներին՝ մանկավարժներին: Արմենուհի Մանուկյանը նախադպրոցական ոլորտի մանկավարժներին հորդորեց՝ մշտապես կապ պահել համալսարանի և ամբիոնի դասախոսների հետ, բոլորին հաջողություն մաղթեց՝ համագործակցության ակնկալիքով:

Ելույթ ունեցան նախադպրոցական հաստատությունների մանկավարժ դաստիարակներ, որոնք փաստեցին՝ իրենց ակնկալիքներն արդարացան, բանիմաց ու գրագետ դասախոսներն այնքան գիտելիքներ տվեցին, որն իրենք կփոխանցեն նաև իրենց գործընկեր դաստիարակներին:

«Մանկավարժականը համարեք ձեր լավագույն գործընկերը, որը միշտ պատրաստ է ձեր կողքին լինել,-ասաց պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը:

Կրթությունը ողջ կյանքի համար է և պետք է շարունակ զարգացնել գիտելիքներն ու կարողությունները, քայլել ժամանակին համահունչ»:

Պրոռեկտորը շնորհավորեց բոլորին գալիք Ամանորի առթիվ՝ մաղթելով խաղաղ տարի, ուժ ու եռանդ, որպեսզի կարողանան պատվով կրել իրենց վրա դրված պատասխանատվությունը:

Հանդիսավոր պայմաններում մանկապարտեզների 70 աշխատակիցների պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը և ամբիոնի վարիչ Արմենուհի Մանուկյանը վերապատրաստման դասընթացի վկայագրեր հանձնեցին:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ

Դեկտեմբերի 26-ին տեղի ունեցավ Մանկավարժական համալսարանի տարեվերջյան Գիտական խորհրդի նիստը:

Ռեկտոր Սրբուհի Գևևորգյանը շնորհավորեց ամսվա հոբելյարին և դոցենտի կոչման երկու վկայագրեր հանձնեց:

Ներկաները դիտեցին Լրատվության և հանրության հետ կապերի կենտրոնի պատրաստած ֆիլմ-հաշվետվությունը բուհի գործունեության մասին:

Այնուհետև ռեկտորը ներկայացրեց «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի 2023 թվականի գործունեությունը՝ ընդգծելով, որ ընթացիկ տարում տեղաշարժեր են նկատվել թե՛ ֆակուլտետների, թե՛ համահամալսարանական ամբիոնների աշխատանքում:

Օրակարգի առաջին հարցի շրջանակներում ռեկտորը հանգամանորեն ներկայացրեց նաև 2024 թվականի բյուջեն՝ ուսանողների թվաքանակի դինամիկան, Արցախից 330 ուսանողներով բուհի ուսանողական համակազմի համալրումը, նախորդ ուսումնական տարվա համեմատությամբ մուտքերի համեմատական ավելացումը, դրամական մուտքերն ու բաշխվածությունը, ինչպես նաև 2024 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշիվը, որը հնարավորություն է տալիս բնականոն կազմակերպել համալսարանի գործունեությունը:

Բուհը հավատարմագրման գործընթացի մեջ է. հանգամանորեն ուսումնասիրվում է բոլոր ստորաբաժանումների գործունեությունը. բուհի պրոֆեսորադասախոսական կազմը և ողջ աշխատակազմը ներառված է այդ գործընթացի մեջ, որը միտված է նոր, ժամանակին համարժեք բարեփոխումների իրականացմանը:

Սրբուհի Գևորգյանը ներկայացրեց բուհի կառուցվածքային փոփոխությունները, խոսեց հաստիքների կրճատման և նոր հաստիքների ամրագրման մասին՝ միաժամանակ հիմնավորելով դրանք:

Տարբեր հաստիքների ոչ նպատակարմարության և կրճատման արդյունքում եկող տարում կավելացվի դոկտոր, պրոֆեսորների, ամբիոնների վարիչների և դեկանների (ըստ ուսանողների թվաքանակի) աշխատավարձերը:

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ Գիտահետազոտական կենտրոնի ղեկավար Կամո Վարդանյանը ներկայացրեց կենտրոնի հաշվետվությունը ՀՀ ԿԳՄՍՆ գիտության պետական կոմիտեի կողմից ֆինանսավորվող բազային ծրագրերի մասին: 2023 թվականին գործել է 6 գիտական լաբորատորիա և 3 գիտահետազոտական ինստիտուտ:

Զեկուցողը ներկայացրեց տարվա ընթացքում տպագրված գրքերը, գիտաժողովները, գիտական հանդիպումներն ու բոլոր ձեռքբերումները:

Օրակարգում բնապահպանական խնդիրներն էին

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի, էկոլոգիայի, կայուն զարգացման համահամալսարանական ամբիոնի և ֆակուլտետի ՈՒԳԸ-ի համատեղ նախաձեռնությամբ դեկտեմբերի 21-ին և 22-ին համալսարանում անցկացվեց միջբուհական ուսանողական երկօրյա գիտաժողով՝ «Ժամանակակից էկոլոգիական կրթություն» խորագրով:

Էկոլոգիայի, կայուն զարգացման համահամալսարանական ամբիոնի վարիչ Սիրինե Շողերյանը բացման խոսքում ընդգծեց գիտաժողովի կարևորությունը՝ վստահեցնելով, որ գիտաժողովի օրերին տարբեր բուհերի ուսանողների միջև կձևավորվեն նոր կապեր, կքննարկվեն կարևորություն ունեցող մի շարք ժամանակակից էկոլոգիական խնդիրներ, առաջին անգամ նման գիտաժողովի մասնակցող ուսանողների համար էլ գիտաժողովը կդառնա փորձի ձևավորման հետաքրքիր հարթակ:

Ամբիոնի վարիչը միաժամանակ ընդգծեց՝ բնության նկատմամբ հասարակության վերաբերմունքի փոփոխությունը կարևոր գործոն է բնության պահպանման գործում: 20-րդ դարի երկրորդ կեսը համարելով էկոլոգիական կրթության ամենաակտիվ ժամանակաշրջան՝ նա ընդգծեց, որ ավելի հարմարավետ և հարուստ ապրելու մարդկային ձգտումը հանգեցրեց բնությունը պահպանելու առաջնահերթության գաղափարին, որով էլ պայմանավորվեց բնապահպանական կրթության անհրաժեշտությունը:

Ամփոփելով՝ Սիրինե Շողերյանն ասաց. «Ժամանակակից էկոլոգիական կրթությունը ենթադրում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների ձևավորում, այլև պրակտիկ կարողությունների զարգացում. քաղաքացիների մասնակցային փորձառություն բնության պահպանության խնդրում»:

Իզուր չէ, որ շատ երկրների կրթական համակարգում էկոլոգիական կրթությունը համարվում է կրթության ոլորտի առաջնահերթություններից մեկը:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց և էկոլոգիական խնդիրներին նվիրված գիտաժողովը կարևորեց ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահ Մարիամ Սարգսյանը:

Երկու օրվա ընթացքում լսեցին 15 զեկուցում: Դրանք վերաբերում էին Կարենիս գյուղի շրջակայքի ցերեկային թեփուկաթևավորների բազմազանությանը, պոմիդորի հայկական արժեքավոր մի քանի սորտերի մորֆոլոգիական հատկանիշների ուսումնասիրությանը, Շաքիի ջրվեժի էկոլոգիական հիմնախնդիրներին, մեղրատու մեղուների մոտ վարքային սննդային ռեակցիաներին, Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղի զբոսաշրջության վրա ազդող գործոններին, Նոր Նորք վարչական շրջանի բացասական կողմերին, Դեբեդ գետի և նրա վտակների էկոլոգիական վիճակի գնահատմանը և այլ հարցերի:

Գիտաժողովին մասնակցում էին ուսանողներ ՀՊՄՀ-ից, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանից, Հայաստանի ազգային ագրարային համալսարանից, դիտորդներ ԵՊՀ-ից և այլ ուսումնական հաստատություններից:

Ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր, Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Նաիրա Սաֆարյանն ընդգծեց նախաձեռնության կարևորությունը:

«Գիտությունը սկսվում է հանրակրթությունից, որի կրողները բուհի շրջանավարտներն են»,-ասաց պրոռեկտորը՝ պատահական չհամարելով նոր չափորոշիչների թիրախները, գիտական ծրագրերը, նախագծային ուսուցումը, որոնք դեռ դպրոցական տարիքից սովորողներին մղում են դեպի գիտություն:

Կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Սամվել Պիպոյանն էլ փաստեց՝ զեկուցումներն աչքի ընկան գիտականությամբ, էկոլոգիական կրթության բազմակողմանի մոտեցմամբ:

Երկօրյա քննարկումներն ամփոփվեցին. եղան հետաքրքիր առաջարկություններ: Աշխատաժողովը փաստեց, որ հայ երիտասարդությունը կարևորում է բնապահպանական հիմնախնդիրները և որ նման գիտաժողովների օգնությամբ նաև կարելի է փոխել հասարակության վերաբերմունքը էկոլոգիական խնդիրների հանդեպ:

Մեծ էր նաև դասախոսական կազմի, գիտական ղեկավարների գործոնը՝ ուսանողներին դեպի գիտական աշխատանքներ կատարելու և ուղղորդելու հարցում:

Էկոլոգիական կրթությունը ամենաժամանակակից կրթությունն է արդի աշխարհում, երբ տեղի են ունենում գլոբալ փոփոխություններ՝ աշխարհի տարբեր ծագերում դառնալով բնական տարբեր աղետների պատճառներ:

Սիլվա ԱՍՐՅԱՆ



Կոմիտասի Նոր տարիներից մեկը

Գա՛լդ բարի, Նո՛ր տարի…

Նոր տարի էր, հին նոր տարիներից մեկը…, և Կոմիտասը, ինչպես միշտ, պետք է գնար բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանի տուն, ուր ամեն տարեմուտի սպասում էին նրան: Բանաստեղծը շատ երեխաներ ուներ, նրա մոտ էր ապրում նաև փոքրիկ Շամունիկը՝ բանաստեղծի հորեղբոր աղջիկը: Այս աղջիկը հրաշալի երգում էր, երգում էր «Կաքավիկը», «Ախ մարալ ջանը»…, և Կոմիտասը լսում էր նրան: Նոր տարի էր, հին նոր տարիներից մեկը: Այդ օրը՝ առավոտյան, Կոմիտասին տխուր լուրեր էին բերել Սասունից, ու նա ոչ մի տեղ չէր ուզում գնալ. որոշել էր՝ իր վշտերի ու մտքերի հետ կմնա իր խցում:

Բայց ելավ տեղից, բամբակից մորուք կպցրեց, ճերմակ վերնոց հագավ, ձեռքն առավ թթենու մի ճյուղ, սրինգը գրպանը դրեց ու հին Վաղարշապատի հին փողոցներով գնաց դեպի բանաստեղծի տուն: Երբ նա մտավ բանաստեղծի բակը, գրպանից հանեց սրինգն ու սկսեց նվագել… Երեխաների ուրախությանը չափ չկար: Բոլորը վազեցին դեպի պատուհանը, քանի որ ամեն տարեմուտի Կոմիտասը այդպես ճերմակ մորուքով, ձեռնափայտով ու սրինգ նվագելով ներս էր մտնում պատուհանից և կանգնելով լուսամուտի գոգին՝ ասում էր.

-Գալդ բարի՛, Նո՛ր տարի:

Այս անգամ էլ նա բացեց պատուհանը, որը նրա համար կիսաբաց էին թողել, կանգնեց լուսամուտի մոտ և նվագեց, նվագեց երկար և ոչինչ չասաց: Իջավ, գրկեց իր շուրջը հավաքված երեխաներին, հետո մոտեցավ բանաստեղծին ու ասաց.

-Զո՛ւր ես գալիս, Նո՛ր տարի…

-Ի՞նչ է եղել…

-Սասունից տագնապալի լուրեր են եկել:

Առաջին տարին էր, որ երեխաները չլսեցին նրա ծիծաղը, նա ոչինչ չասաց երեխաներին, մի երկու տխուր մեղեդի նվագեց, հետո երկար զրուցեց բանաստեղծի հետ, մոռացավ պոկել իր ճերմակ բամբակից մորուքը ու այդպես էլ վերադարձավ տուն:

Սա վերջին Նոր տարին էր, որ այցելեց նա բանաստեղծին, և երբ շատ տարիներ անց թաղում էին նրան, փոքրիկ Շամունեն, որ արդեն տարեց կին էր դարձել, վերջին անգամ ապակու տակից տեսավ նրա հավիտենական քնով քնած դեմքը, և թվաց նրան, թե ինչպես տարիներ առաջ, պատուհանի ետևից տեսնում է նրան, իսկ մորուքը ճերմակ այն բամբակի հետքերն են, որ կպցնում էր վարդապետը նոր տարվա օրերին: Ու բոլորի համար անսպասելի ծունկի իջավ դագաղի առաջ և մրմնջաց.

-Գա՛լդ բարի, Նո՛ր տարի…

Իրոք, միշտ չէ, որ հայն ուրախ է դիմավորել Ամանորը և իզուր չէ, որ ամեն տարեմուտի կրկնել է ծանոթ երգի բառերը. «Երնեկ թե այս Նոր տարին վերջ տա հայի ցավերին…»: Բայց և ամեն անգամ, հույսով ու լավատեսությամբ, արցունքների միջից ժպտալով, բաց է արել իր տան ու հոգու դռները Նոր տարվա առաջ ու շշնջացել.

-Գա՛լդ բարի, Նո՛ր տարի…

ԱԿՈՒՆՔ

Կան անհատներ, որոնք ժամանակի մեջ պատմություն են կերտում: Առավել հատկանշական է, երբ այդ անհատները ճիշտ ժամանակին են հայտնվում և իրենցով կերտում են սերունդների պատմությունը, որը ձգվում է մինչև մեր օրերը:

ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Կարլեն Ժիրայրի Միրզախանյանն իր ֆենոմենալ կերտվածքով, մարդկային կերպարով ու տեսակով ապրում է սերունդների հիշողության մեջ: Նա կարողացավ հիմնադրել մշակութային մի այնպիսի օջախ-կենտրոն, որտեղ իր շուրջը ու նաև իրար շուրջ համախմբեց հայ մշակույթի երևելիներին, մասնաշենքի հիմնադրումից մինչև նոր մասնագիտությունների ներդրում, որին կոչված էր:

Իրականության մեջ ճիշտ կողմնորոշվելու հմտությամբ ու նուրբ դիտողականությամբ էր Կարլեն Միրզախանյանը գնահատում յուրաքանչյուր ուսանողի ու դասախոսի, նրանց հետ ընկերանում՝ երբեմն «իջնելով» խստապահանջ ղեկավարի իր բարձրությունից, իրերը, երևույթներն ու մարդկանց առնում իր հումորային յուրահատուկ կոլորիտի մեջ և այդպես լուծում բարդ թվացող բոլոր խնդիրները…

Այս ամենի մասին պատմում են նրա ուսանողներն ու գործընկերները, արվեստագետները, որոնցից շատերն այսօր մշակութային անվանի գործիչներ են, ոլորտի ղեկավարներ՝ Անետա Երզնկյան, Ժիրայր Դադասյան, Կարեն Գևորգյան, Արա Գևորգյան… Նրանք անթաքույց սիրով են հիշում ուսանողական տարիների այն ջերմ մթնոլորտը, որ միավորել էր բոլորին՝ ռեժիսորներին, պարուսույցներին, օպերատորներին:

Հայաստանի կինոգործիչների միության փոքր դահլիճում դեկտեմբերի 22-ին Կարլեն Ժիրայրի Միրզախանյանի ծննդյան 100-ամյակին նվիրված «Ակունք» վավերագրական ֆիլմի շնորհանդեսն էր, մի յուրօրինակ պատում շուրջ կես դար Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում իր նվիրումը ապրելու կերպ դարձրած մարդու մասին:

ԵՊՀ Իրավաբանության ֆակուլտետն ավարտած, նույն գծով ասպիրանտական կրթություն ստացած, պատմագիտության զարգացման գործում մեծ ավանդ ունեցած մարդը հիմնադրել և 30 տարի ղեկավարել է համալսարանի Գեղագիտական դաստիարակության, ապա Կուլտուրայի ֆակուլտետը: Մշակույթի ոլորտում նա մեծ հետք է թողել, ուրույն ոճ ու ձեռագիր. դա են փաստում նաև ֆիլմում նրա մասին հուշեր պատմող մշակութային գործիչները, նրա աշխատանքը գնահատող մտավորականները, դոկտոր, պրոֆեսորները, որոնց ճանապարհները տարբեր առնչություններով խաչվել են, և որոնք ի մոտո ճանաչել են մի անհատի, ում ճակատագրով վերապահված էր լինել իր ժամանակի առաջամարտիկը, որպեսզի սերունդների կրթության ու դաստիարակության գործը հավուր պատշաճի կազմակերպեր և կրթօջախը ճանաչելի դարձներ: Հենց նրա ջանքերի շնորհիվ է Կուլտուրայի ֆակուլտետը դարձել Հայաստանի մշակութային ասպարեզի բարձրորակ կադրերի պատրաստման դարբնոց, արվեստը ճանաչելի դարձնող ուրույն օջախ:

Բեմ է բարձրանում ՀՀ կինոգործիչների միության նախագահ, ՀՀ ժողովրդական արտիստ, Եվրոպական կինոակադեմիայի ակադեմիկոս Հարություն Խաչատրյանը, ով Կարլեն Միրզախանյանի ուսանողն է եղել ու գործընկերը, նաև ընտանիքի բարեկամը: Մի անթաքույց սիրով է ներկայացնում այն տարիները, երբ ինքը՝ Ախալքալաքից Երևան եկած մի պատանի, տարիներ շարունակ անհույս փորձում էր ընդունվել Կուլտուրայի ֆակուլտետ, «որովհետև շատ ֆիլմեր էր դիտել…»:

Կարլեն Միրզախանյանը նկատեց նրան՝ ապագա կինոգործչին, և այսօր ավելի քան երջանիկ ու պարտական է նրան՝ հայրական վերաբերմունքի համար: Ափսոսում է, որ այդ տարիների մասին վավերագրական ֆիլմ չի ստեղծել, բայց լավ է, որ ստեղծագործական մի հրաշալի թիմ այդ գործն արել է սիրով ու մեծ պատվախնդրությամբ:

«Այսօր ամենահարազատ մարդու մասին ֆիլմ կդիտենք, որը, ճիշտն ասած, մի քիչ վերապահումով ֆիլմ կանվանեի: Սա վավերապատում է Կարլեն Միրզախանյանի մասին,-ասում է ֆիլմի սցենարի հեղինակ Դիանա Մարկոսյանը: -Պարզապես զարմանալի է, որ փորձում ես կադրեր գտնել մարդու մասին, բայց չկա, մի մարդու, որը ստեղծել է կինոյի բաժին, դաստիարակել-կրթել է օպերատորներ, ռեժիսորների մի քանի սերունդներ: Մենք ընդամենը մի քանի լուսանկարներ հայթայթեցինք…

Սա մի փորձ է, որը, ես կարծում եմ, բոլորիդ մոտ կառաջացնի Կարլեն Միրզախանյանի մասին հիշողություններ, կարթնացնի ձեր մեջ այն բարի ու լավ ժամանակը, անհոգ տարիները, որի մեջ ապրել ենք բոլորս:

Ես պատիվ եմ ունեցել ուսանելու այն տարիներին, երբ Կարլեն Ժիրայրիչը ուղղակի քայլում էր ֆակուլտետի միջանցքներում տանտիրոջ իրավունքով, իմ գործընկեր Արտյոմ Աղասարյանը ևս այդ ֆակուլտետի շրջանավարտ է, նրան դաստիարակել են այդ ֆակուլտետի կինոգործիչները: Մեր խմբի մյուս երկու անդամները ուղղակիորեն չեն կրել այդ ֆակուլտետի ազդեցությունը, բայց մեր օպերատոր Հրայր Սիրականյանը պրոֆեսիոնալ դաշտ է մտել Ալբերտ Յավուրյանի ձեռամբ: Նկատի ունեմ, մարդիկ, ովքեր այս ֆիլմի «մեղավորներն են», ճանաչել են, սիրել և ունեցել այդ սերնդի ազդեցությունն իրենց վրա»:

…էկրանին տարիների վավերագրությունն է, նկարներ, որոնք խոսում են մշակույթի ոլորտի նվիրյալների աստղաբույլի ու նրանց մի գաղափարի շուրջ համախմբած մեծ մանկավարժի մասին: Պատմություն մարդկանց, անհատների ու թիմի մասին, որոնց գործունեությունը շարունակվում է մեր օրերի մեջ՝ նրանց շրջանավարտների ու սերունդների հարափոփոխ երթի մեջ:

Ապրում է մարդը՝ իր գործով, իր թողած ժառանգությամբ ու իր անդուլ աշխատանքի մասին պատմություններով:

«Ակունք» ֆիլմը ներկաների հոգիներում ջերմ հիշողություններ ու հույզեր արթնացրեց. իսկապես պատմությունը սերունդների շարունակականության վավերագիրն է, երբ ակունքը տեսանելի է…

Սիլվա ԱՍՐՅԱՆ



Լույս է տեսել

Լույս է տեսել լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիայի նախաձեռնած հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածուն՝ պրոֆեսոր Լալիկ Խաչատրյանի խմբագրությամբ:

Գիտաժողովը, որին մասնակցում էին Մանկավարժական համալսարանի, Վալերի Բրյուսովի անվան լեզվաբանական, Մխիթար Հերացու անվան պետական բժշկական և «Անանիա Շիրակացի» համալսարաններից մասնագետներ, նվիրված էր հայագիտության հարցերին և միջմշակութային հաղորդակցությանը:

Ժողովածուի հոդվածները վերաբերում են լեզվագիտակցությանը, պատմագրության մեջ գործածված լեզվանուններին, ճանաչողական բառակազմությանը, ստուգաբանությանը, մարդկային զոհաբերությունների երևույթին Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. II-I հազարամյակներում: Տեղ են գտել նաև Խորհրդային Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքին և լեզվական բառապաշարին, «Սասունցի Դավիթ» էպոսում արմատակրկնությանը, էպոսում գործածած սոմատիկ դարձվածքներին, միջլեզվային իրողությունների զուգադրական քննությանը, թանգարանագիտությանը, մետալեզվին ու նրա կիրառական առանձնահատկություններին և այլ թեմաներին անդրադարձող հոդվածներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ԼՈՒՍԱՏՈՒՆ

«Մեր նորահաս բանաստեղծների մեջ Հովհաննես Թումանյանը միշտ բարձր է ամենքից էլ և ունի փայլուն ապագա... նա ունի բարձրաթռիչք երևակայություն, ճոխ և սահուն լեզու, խորաթափանց զննողություն և այն բոլոր հոգեկան առանձնահատկությունները, որոնք պետք են մի ապագա ինքնուրույն բանաստեղծի տաղանդն ու հանճարը բնորոշելու համար»,-կանխատեսությամբ ներկայացրել է Ղազարոս Աղայանը:

Հայ գրականության ամենափայլուն ու ակնառու դեմքերից է Հովհաննես Թումանյանը՝ հայ գրականության յուրահատուկ լուսատուն: Չկա մեկը, որ ծանոթ չի մեծ գրողի հանրահայտ ստեղծագործություններին:

Թումանյանական միտքն ընկալելու, հասկանալու և մեծանուն գրողի ստեղծագործական ժառանգությանն ավելի մոտ լինելու համար դեկտեմբերի 18-ին ՀՊՄՀ Բանասիրական ֆակուլտետի Վաչե Պարտիզունու անվան Հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Սուրեն Դանիելյանի նախաձեռնությամբ կազմակերպվել էր ուսանողական գիտաժողով՝ նվիրված բանաստեղծի մահվան 100-ամյակին:

Պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը հանդես եկավ բացման խոսքով՝ ներկայացնելով գիտաժողովի էությունը:

Գիտաժողովում քննարկված թեմաները բազմազան էին. «Շանթ-Թումանյան առնչությունների շուրջ» (Դիանա Այվազյան), «Թումանյանը՝ հայ պոեմի առաջնորդ» (Թագուհի Աղասյան), «Թումանյանը՝ Օշականի գնահատությամբ» (Օֆելյա Գասպարյան), «Ամենայն հայոց բանաստեղծի ժողովածուները» (Անահիտ Բադալյան), «Թումանյանի արձակը» (Հասմիկ Սարգսյան), «Թումանյանը և 1915 թվականը» (Մարիամ Վարդանյան), «Մարիամ Թումանյան և Հովհաննես Թումանյան» (Նինա Ճուղուրյան), «Թումանյանի Վերնատունը» (Օլյա Ղարիբյան), «Թումանյանը՝ մանկագիր» (Մելինե Սրոցանց), «Թումանյանի Մարոն՝ ավանդական բարքերի զոհ» (Սուսաննա Չարչյան):

Գիտաժողովի ընթացքում քննվեցին շատ հարցեր, ուսանողներն ավելի խորությամբ ճանաչեցին մեծահամբավ գրողին:

Ուսանողական գիտաժողովի ավարտին ամփոփիչ խոսքով հանդես եկան Բանասիրական ֆակուլտետի դեկան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Գալստյանը, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Նաիրա Խաչատրյանը, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Քնարիկ Աբրահամյանը: Նրանք ընդգծեցին մեծ գրողի ստեղծագործություններն անընդհատ ուսումնասիրելու կարևորությունը, ինչպես նաև խրախուսեցին ուսանողական գիտաժողովի մասնակիցներին՝ Հովհաննես Թումանյանի գրական ու հասարակական գործունեության տարբեր շերտերին հանգամանորեն անդրադառնալու համար:

Հովհաննես Թումանյանի մասին անընդհատ կարելի է խոսել, կարդալ ստեղծագործություններն ու չհագենալ:

Մարիամ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՄԱՆՈՐՅԱ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի ուսանողական խորհուրդն ու գեղարվեստական լուսանկարչության և օպերատորության ամբիոնը համատեղ կազմակերպել էին ամանորյա ֆոտոմրցույթ-ցուցահանդես: Տոնական հանդերձանք ու տրամադրություն, երեխաներ, հրավառություն, գլխավոր տոնածառ, ամանորյա զարդարանքներ. այս և այլ նախատոնական կադրեր էին որսացել մրցույթի մասնակիցները՝ Կուլտուրայի ֆակուլտետի տարբեր բաժինների ուսանողները:

Ներկայացված լուսանկարներից ընտրվեցին լավագույն տասնհինգը, որոնք երեք օր կցուցադրվեն Կուլտուրայի ֆակուլտետի առաջին հարկի սրահում՝ հաղորդելով ամանորյա տրամադրություն:

Գեղարվեստական լուսանկարչություն բաժնի մագիստրոս Արփինե Կարապետյանը նշեց, որ հաճույքով է մասնակցում նմանատիպ ցուցահանդեսներին:

«Իմ լուսանկարում ավելին է, քան պարզապես հրավառությունը. ամեն գույնի մեջ մի հիշողություն կա՝ վատ, լավ, արկածային, խառը: Հրավառությունից փայլող ճեղքերը սրտի ժայթքումներ են, որոնք հիշեցնում են, որ պետք չէ մոռացության մատնել այն հիշողությունները, որոնք քեզ պարգևել են ակնթարթային երջանկության պահեր»,-նշեց Լրագրություն բաժնի 1-ին կուրսի ուսանողուհի Լիանա Պետրոսյանը և հավելեց, որ նման մրցույթ-միջոցառման առաջին անգամ է մասնակցում:

Հավելենք, որ Կուլտուրայի ֆակուլտետի ուսանողական խորհուրդը խոստանում է նման մրցույթ-ցուցահանդեսները դարձնել շարունակական:

Մի նկարի պատմություն

Գեղարվեստական կրթության ֆակուլտետում բացվել էր ֆակուլտետին կից գործող նկարչական ստուդիայի սաների մեկ աշխատանքի ցուցահանդես:

Շնորհավորելով բոլորին՝ ֆակուլտետի դեկան Արա Հակոբյանն ասաց՝ այս գեղեցիկ ցուցասրահում մենք գրեթե ամեն շաբաթ կազմակերպում ենք նկարազարդումների ցուցահանդեսներ՝ շեշտը դնելով երիտասարդ սերնդի վրա:

Անցյալ տարի ստեղծված ստուդիայի սաների աշխատանքները զարդարել էին ֆակուլտետի սրահը: Դրանք բոլորն էլ տարբերվում էին իրարից, թեև բոլորը նկարել էին նույն նատյուրմորտը:

Դեկանն ընդգծեց՝ ստուդիայի նպատակն է երեխաների մեջ զարգացնել նկարչական գիտելիքներ, ճաշակ սերմանել, նրանց ծանոթացնել նկարչության գրագիտության գաղտնիքներին:

Ստուդիայի դասախոսներ Սևադա Սարգսյանի, Սրապիոն Դանիելյանի և Արամ Համբարյանի նվիրյալ աշխատանքի շնորհիվ երեխաների աշխատանքների ցուցահանդեսը օրը դարձրել էր հետաքրքիր դասախոսների, երեխաների և նրանց ծնողների համար:

Ներկայացված աշխատանքները թեմատիկայով նույնանում էին, բայց կատարման տեսանկյունից յուրովի տարբերվում էին մեկը մյուսից:

«Երեխաների աշխարհը շատ հեքիաթային է ու մաքուր: Գծանկարի և գունանկարի մեկ աշխատանքի՝ նատյուրմորտի հանդեպ երեխաները դրսևորել են հետաքրքիր մոտեցումներ»,-ասաց պրոֆեսոր Արա Հակոբյանը:

Մտահղացման հեղինակ Սևադա Սարգսյանը շնորհավորեց բոլորին՝ ընդգծելով, որ ստուդիայի ստեղծման հիմնական նպատակն է երեխաներին կերպարվեստային գրագիտություն փոխանցել՝ կերպարվեստի լեզվին հաղորդակից դարձնելու իմաստով, ինչու չէ, նաև երեխայի ժամանցը կազմակերպելու խնդիր էր դրվել:

«Կերպարվեստը մարդու կյանքի գործունեության գրեթե բոլոր գործառույթներին է առնչվում՝ ճանաչողական, դաստիարակչական, գեղագիտական, հաղորդակցական»,-ասաց Սևադա Սարգսյանը՝ փաստելով, որ խնդիր դնելով մի նատյուրմորտը դիտարկել տարբեր տեսանկյուններից՝ փորձել են արվեստը մոտեցնել գիտությանը, քանզի սա ոչ միայն ցուցահանդես է, այլ փոքրիկ խմբային հետազոտություն, որը ներկայացրել են ներկաների դատին:

Ֆակուլտետը երեխաների համար շնորհակալագրեր և փոքրիկ նվերներ էր պատրաստել:

Միջոցառման ավարտին փոքրիկ նկարիչները շրջեցին ֆակուլտետում, ծանոթացան արվեստի սրահներին, որտեղ ցուցադրված էին դասախոսների և շրջանավարտ նկարիչների ստեղծագործությունները:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ԵՎ ԹՈՂ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԼԻՆԻ

Լալա Սամվելի Հարությունյանը ծնունդով Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղից է: Սովորել է Բարմեն Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցում: 2022 թվականին ընդունվել է Արցախի պետական համալսարանի Բնագիտական ֆակուլտետի մաթեմատիկայի և ֆիզիկայի բաժինը:

Ցավոք, 2023 թվականին ընտանիքով բռնի տեղահանվել է բոլորի հետ, մեծ ցավով թողել իր ծննդավայրը և այժմ ապրում է Հայաստանում, սովորում Մանկավարժական համալսարանի Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի ֆիզիկայի բաժնի 2-րդ կուրսում:

Լալային խնդրում եմ պատմել իր ընտանիքի մասին: Հայրն աշխատել է ԱրցախՀէԿ-ում, մայրը տնային տնտեսուհի էր: Ունի քույր և եղբայր, քույրն արդեն ավարտել է դպրոցը, եղբայրը դեռ սովորում է 10-րդ դասարանում:

Լալան հուզմունքով է հիշում այդ մղձավանջային օրերը: Ստեփանակերտում վարձով էր ապրում բարեկամի աղջիկների հետ: Այդ օրը համալսարանում դասի էր: Ընտանիքը գյուղում էր, եղբայրը՝ գյուղի դպրոցում: Իրենք երկրորդ հերթով էին դասի գնում: Այդ օրը կուրսի ուսանողներով լսարանում էին, երբ աղմուկ լսեցին: Ոչինչ չհասկացան: Իսկ երբ դուրս եկան լսարանից՝ իրարանցում էր. բոլորն իջնում էին համալսարանի ապաստարան: Թշնամին կրակում էր, ռմբակոծում քաղաքը:

Բարեկամների հետ ուրիշ ապաստարան տեղափոխվեցին: Չէին կարողանում կապվել ընտանիքի անդամների հետ…

«Ամենուր խուճապ էր, տեղեկատվական հոսքը՝ անորոշ ու հակասական. ասում էին, թե ազերին հարձակվել է միայն Ստեփանակերտի ու Ասկերանի շրջանի վրա: Եվ ինձ թվում էր՝ մերոնք գյուղում ապահով են: Ապաստարանում իմացա, որ վիճակը օրհասական է: Կապ չկար: Սեպտեմբերի 19-ին 13.10-ի կողմերը սկսված կրակահերթերը սարսափի մեջ էին գցել բոլորին: Ամեն մարդ փնտրում էր իր հարազատին, բայց կապ չկար, և հարազատներից լուր չունենալն անհանգիստ տագնապներով էր լցնում յուրաքանչյուրի հոգին: Հաջորդ օրը հազիվ ռացիայով կապվեցինք ընտանիքի անդամների հետ և տեղեկացանք, որ Մարտակերտի շրջանը տարհանում են, գալիս են օդակայան, որ ռուսների մոտ ավելի ապահով լինի: Մորեղբայրն ուզում էր գալ իրենց ետևից, բայց անհույս. քաղաքից թողնում էին դուրս գալ, իսկ քաղաք մտնել՝ ոչ»:

Երեկոյան հազիվ միացան ընտանիքի անդամների հետ, գնացին օդակայան, որտեղ մեկ շաբաթ մնացին: Օդակայանը լեցուն էր մարդկանցով: Բայց ոչ մի անվտանգության ապահովում:

Այդ ընթացքում բանակցություններ էին ընթանում: Բոլորը սպասողական վիճակում էին, բայց. «Սեպտեմբերի 25-ին մենք դուրս եկանք. բոլորն արդեն լքում էին Ստեփանակերտը: Մենք էլ մորեղբորս «ֆորդ» մեքենայով երեք ընտանիքով դուրս եկանք՝մեր ընտանիքը, մորեղբորս ընտանիքը և նրա աղջկա ընտանիքը: Ոտք դրինք Հայաստան»:

Լալան չի կարողանում պատմել՝ ինչպես անցան Հակարիի կամուրջը. դա աննկարագրելի զգացողություն էր:

Հայաստանում տեղավորվեցին բարեկամի տանը, այնուհետև վարձով տուն գտան Արարատի մարզի Զորակ գյուղում:

Փորձում եմ թեմայից շեղել, հարցնում եմ՝ բնագիտական թեմաներից բացի ինչ նախասիրություններ ունի: Լալան ասում է, որ սիրում է անգլերեն և ուզում է զարգացնել այն: Դրա համար շատ է աշխատում, անգլերեն ֆիլմեր է նայում: Միաժամանակ սիրում է հարազատների և ընկերների հետ ժամանակ անցկացնել:

Հարցնում եմ, թե ինչպես էր անցկացնում Ամանորը Արցախում, ինչ հիշողություններ ունի: Պարզվում է 2017 թվականին կորցրել է սիրելի եղբորը և այլևս Նոր տարին ընտանիքում չեն տոնում: 2020 և 2023 թվականներն էլ ավելի խտացրին ցավը. Ամանորը նշելը մնաց որպես հիշողություն: Ամանորին ընտանիքն ուղղակի սեղան է նստում:

Արցախցի մյուս ընտանիքների համար էլ Ամանորն արդեն տոն չի:

Լալային զգուշորեն հարցնում եմ, թե ինչպես էին դիմակայում շրջափակմանը:

-Շրջափակումն սկսվեց 2022 թվականի դեկտեմբերի 12-ին: Հույս ունեինք, որ ճանապարհը կբացվի… Առաջին ամիսներին առաջին անհրաժեշտության մթերքները թանկացան: Շաքարավազը 1000 և ավելի դրամ էր:

Բայց ծնողներն ամեն ինչ անում էին երեխաների համար. Լալան չի մեղադրում մթերքը թանկ վաճառողներին, փորձում է նրանց այդ վարքն արդարացնել. իրենք էլ ուրիշ բանի կարիք ունեին. վաճառում էին, որ գնեն իրենց անհրաժեշտ բաները:

-Նույնիսկ քեզ չպիտի մեղադրես,-ասում է Լալան:- Ստեղծված իրավիճակին ընբռնումով էին մոտենում: Գյուղական վայրերում ավելի հեշտ էր սնվել, իսկ քաղաքում՝ դժվար: Վառելանյութ չկար, հացի մշտական հերթերը մաշում էին մարդկանց:

Լալայի ընտանիքը հողակտոր ուներ մշակած, միրգ ու բանջարեղեն ունեին, որով ապրում էին: Ասում է՝ գյուղի ժողովուրդը ապրում էր, նույնիսկ վատ չէր ապրում: Երբ տրանսպորտի հարցը լուծվում էր՝ քաղաքի բարեկամներին սննդաթերք էին ուղարկում:

Մի քանի ամիս վառելանյութ չկար, իսկ երբ ինչ-որ չափով ճարեցին՝ ավտոբուս տրամադրեցին հիվանդներին քաղաք բուժման տանելու համար, Լալան նրանց հետ սեպտեմբերի 4-ին կարողացավ Ստեփանակերտ գնալ, որպեսզի դասերից հետ չմնա:

-Ուսանողների մեծ մասը չէր կարողանում դասի գալ և կրթություն ստանալ: Մի խոսքով մեզ զրկել էին նաև հոգևոր սննդից: Դասախոսներն ընբռնումով էին մոտենում: Մեր կուրսից 2-3 հոգի էինք կարողանում գնալ դասի, ովքեր դասի չէին կարողանում գալ, դասախոսությունները գրում էինք և համացանցի միջոցով ուղարկում նրանց:

Ես իմ կյանքը մշտապես պատկերացրել եմ Արցախում, իմ գյուղում: Մտածում էի, որ ուսումս ավարտելուց հետո կգնամ իմ ծննդավայր՝ գյուղ, կաշխատեմ գյուղի դպրոցում իմ մասնագիտությամբ…Բայց հանկարծ իմ երազանքները փշրվում են, Հայաստան, նոր միջավայր, նոր կյանք... Ամեն ինչ սովորական է դարձել, բայց չեմ կարող ասել, որ ամբողջովին հարմարվել եմ…

Հայաստանում բոլորին լավ են ընդունել, բոլորը շատ բարյացակամ են՝ վստահեցնում է Լալան:

-Ի՞նչ է բարբառը քեզ համար: Խոսո՞ւմ ես այստեղ բարբառով:

-Իհարկե՛ խոսում եմ: Ոչ միայն ընտանիքի անդամների հետ, դասերին էլ: Իմ կուրսում արցախցի մի կուրսեցի էլ կա՝ Գրիգորյան Աննան: Երկուսս էլ ֆիզիկայի բաժնում ենք սովորում: Երկու հոգի էլ կան, որ նույն ֆակուլտետի մաթեմատիկայի բաժնում են սովորում: Իրար հետ մեր բարբառով ենք խոսում:

Լսել եմ, որ որոշ համալսարաններում տարբերություն են դնում հայաստանցիների և արցախցիների մեջ: Չգիտեմ դա որքանով է ճիշտ, բայց այստեղ դասախոսները և ուսանողները մեզ ջերմությամբ են շրջապատել, ոչ մի խտրություն չեն դնում մեր մեջ:

Արցախցի աղջիկն այստեղ էլ շարունակում է լավ սովորել, միջավայրը դրա հնարավորությունը տալիս է:

-Ի՞նչ երազանքներ ունես,-հարցնում եմ:

-Մանկավարժ եմ ուզում դառնալ: Դառնալու եմ ֆիզիկայի ուսուցիչ:

Լալայի մայրը ժենգյալով հաց է թխում և վաճառում՝ օրվա ապրուստը հայթաթելու համար: Աղջիկը չի կարողանում հիշել, թե ինչ կանաչիներ են օգտագործում, բայց Հայաստանում կան այդ բոլոր կանաչիները:

Հայրը դեռ չի աշխատում: Ինքն էլ երկրորդ հերթով աշխատում էր, բայց երբ սկսվեցին միջանկյալ քննությունները, թողեց աշխատելը: Մեր զրույցից առաջ էր միջանկյալ քննություն հանձնել:

Լալան թերթի միջոցով ուզում է գոտեպնդել հայ ազգին, հավատում է, որ ամեն ինչ լավ է լինելու. «Հավատացեք վար նորից մունք քինալու ենք մեր տները»:

Լալան վերադառնալու հույսը չի կորցնում:

-Ի՞նչ կուզեիր այս Ամանորից:

-Թող վերադարձնի բոլոր հարազատ մարդկանց:

Լալան պատերազմի ընթացքում կորցրել է մորեղբոր տղային: Մարտակերտի շրջանի Չարեքտարում:

Նա ամանորյա մաղթանքներ է հղում դասախոսներին՝ թող միշտ ժպիտով մտնեն լսարան և իրենց ժպիտով վարակեն մեզ: Եվ թող խաղաղություն լինի:

Զրույցը՝ Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

Լազարյանների առաքելությունը, հին հայկական ավանդույթները և պատմական հիշողությունները 35 տարի անց

Նոր տարվան ընդառաջ ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցի ուսուցչական համակազմը կազմակերպել էր մի շարք բաց դասեր՝ նվիրված Լազարյան տոհմի բարեգործական գործունեությանը: ՌԴ-ում Հայաստանի Հանրապետության դեսպանության Լիազորված դեսպանորդ, արտակարգ նախարար Աստղիկ Բալդրյանի և դեսպանություն երկրորդ քարտուղար Գեղամ Ադամյանի ուղեկցությամբ հետաքրքիր տեղեկատվական դասախոսությունից հետո, վերջիններիս գլխավորությամբ, դպրոցի աշակերտների համար կազմակերպվեց էքսկուրսիա Լազարյանների նախկին կալվածատնով, որը հիմնադրվել է 1815 թվականին, ուր այժմ գտնվում է Հայաստանի Հանրապետության դեսպանությունը:

Ի դեպ, նշենք, որ ՌԴ-ում ՀՀ դեսպանությունը գտնվում է իր երկրի անունը կրող փողոցի վրա՝ Հայկական նրբանցք, 2: Սա բացառիկ երևույթ է:

Հագեցած էր նաև հաջորդ դասը. 1988 թ. Սպիտակի երկրաշարժի 35-ամյա տարելիցի շրջանակներում տեղի ունեցավ հանդիպում ՌԴ Նկարիչների միության անդամ, ՌԴ Մշակույթի և արվեստի միջազգային ակադեմիայի ակադեմիկոս Եվգենի Ժիլյաևի հետ, ով 1988-ին որպես փրկարարական ջոկատի հրամանատար առաջիններից էր, որ իր ահռելի ներդրումն է ունեցել աղետի հետևանքները վերացնելու գործընթացի մեջ՝ փրկելով մարդկանց կյանքեր:

Ներկա էր նաև վերոհիշյալ ակադեմիայի թղթակից անդամ, «Մոսկովյան էնցիկլոպեդիա» ֆոնդի տնօրեն Ելենա Մատյուշինան:

Դպրոցի սաները հնարավորություն ունեցան շփվել այդ դեպքերին ականատես պարոն Ժիլյաևի հետ, և առաջիններից էին, որ տեսան այն հեղինակային լուսանկարները, որոնք նա կատարել էր իր առաքելության ժամանակ: Բանախոսը հուզմունքով էր պատմում իր ապրած այդ օրերի մասին՝ ներկայացնելով նաև իր հին «Զենիթ», լուսանկարչական սարքը, որը նույնպես եղել էր այդ օրերի լուռ վկան:

Տարին ամփոփվեց Ամանորին և Սուրբ Ծնունդին նվիրված բաց դասերով՝ լի հույսերով ու հավատով: Դրական լիցք հաղորդեցին նաև օրվա հերոսները՝ Ձմեռ պապն ու Ձյունանուշը, իսկ դպրոցի սաները գրական-երաժշտական, պարային գեղեցիկ կատարումներով հանդես եկան:

Դպրոցի ուսուցիչները հանգամանորեն պատմեցին հայկական հին ծեսերի, ավանդույթների մասին, որոնք իրենց մեջ պարփակում են խորը խորհուրդ ու հոգու բարություն. մարդիկ ներում էին միմյանց, տանտիկինները մեղր էին քսում ընտանիքի բոլոր անդամների բերաններին, որպեսզի միշտ բարին խոսվի ու կատարվի:

Այս դասի հյուրն էր դպրոցի շրջանավարտ, հայտնի հրուշակագործ Անի Նազարյանը: Նա և իր դուստրը արդեն երկու տարի սիրով հաճախում են հարազատ «Վերածնունդ» դպրոց:

Ընդգծենք, որ սեփական պատմության, տոների, ավանդույթների ու ծեսերի իմացությունն առանցքային տեղ է գրավում «Վերածնունդ» դպրոցի ուսումնական ծրագրում: Միայն այդպես կարելի է հայրենիքից դուրս հայ ապագա սերունդներն պահել իրենց արմատներին մոտ, կրթել և դաստիարակել հայեցի:

ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոց

ԱՊԱԳԱ ԼՐԱԳՐՈՂԻ ԷՋ

Հաջողության գուրի

«Մինչև չպարտվենք՝ հաղթանակի համը չենք զգա»,- մեզ հետ զրույցում ասաց «Դուքենդո» ֆեդերացիայի մարզիչ Հայկ Մելքոնյանը: 23-ամյա մարզիչն արդեն հասցրել է գրանցել բավականին մեծ հաջողություններ:

«Կարատե մարզաձևով սկսել եմ զբաղվել ինը տարեկանից և մինչև այսօր չեմ զղջում մասնագիտության ընտրության հարցում. ինչ-որ կետի հասնելու համար պետք է ունենալ կամքի ուժ, որովհետև ամենադժվարն ու ծանրը պարտությունն է, առանց որի հաջողության հասնել գրեթե հնարավոր չէ»,- ասում է նա:

2011-2012 թթ. վաստակել է Հայաստանի չեմպիոնի տիտղոսը, իսկ 2013-2014 թթ. Վրաստանում՝ Ախալքալաքում, Գավաթային միջազգային առաջնությունում գրավել է առաջին տեղը, 2014 թվականին ԱՄՆ- ում մասնակցել է աշխարհի առաջնությանը և գրավել առաջին հորիզոնականը, 2015-ին Հայաստանի վեց լավագույնների թվում «Դուքենդո ֆեդերացիա»-ի կողմից «Սուր» հուշամրցաշարում ստացել է սուր, 2016 թվականին Վրաստանում Սևծովյան գավաթի առաջնությանը ևս գրավել է առաջին տեղը:

Հայկ Մելքոնյանը մարզում է Արագածոտնի մարզի հինգ՝ Պարտիզակ, Մաստարա, Շամիրամ, Ներքին Բազմաբերդ և Թաթուլ գյուղերի պատանիներին: Ունի 50 սան: Մինչև 14 տարեկան տղաների է մարզում, բայց նրա պարապմունքներին նաև աղջիկներ են հաճախում: Մարզիչը հպարտությամբ նշում է. «Ունենք նաև աղջիկ մարզիկներ, որոնք երկրից դուրս մասնակցում են տարբեր մրցաշարերի, և արդյունքը դրական է»:

«Մարզիկների համար ամենակարևորը չընկճվելն է, միշտ առաջ շարժվելն ու ամեն գնով պայքարելը՝ նպատակներին հասնելու համար» ,-եզրափակում է «Դուքենդո ֆեդերացիա»-ի մարզիչ Հայկ Մելքոնյանը:

12-ամյա Մկրտիչ Ստեփանյանը վստահ է, որ նման մարզիչ ունենալու շնորհիվ ինքը կհասնի մեծ հաջողությունների. «Ամեն մենամարտից առաջ ընկեր Հայկը մեզ հետ է մեզ հետ, և ամեն բան հաղթահարելի է դառնում»:

Փոքրիկ մարզիկն իրեն արդեն ուժեղ մարդ է համարում. «Ամենաթույլ մարդը կարող է պարտությունից հետո կիսատ թողնել սպորտը, իսկ ես բոլոր պարտությունները հաղթահարել եմ և ինձ ուժեղ եմ համարում»,- անկեղծանում է Մկրտիչը: Նա սպորտով սկսել է զբաղվել յոթ տարեկանից և արդեն մասնակցել է մի շարք մրցույթների: Վրաստանում նույնիսկ գրավել է առաջին տեղը: Մկրտիչը մասնակցել է պրոֆեսիոնալ գոտու համար ութ մենամարտերի, բայց հաղթահարել է միայն վեցը:

«Առաջին գոտիս եղել է 2022 թվականին, գրավել եմ առաջին տեղը: Հաղթել եմ նաև հակառակորդիս՝ ռևանշ մենամարտում: Արժանացել եմ սև և կարմիր գոտու»,- պատմում է նա:

2023 թվականի դեկտեմբերին Մկրտիչը մասնակցել է Աշտարակում տեղի ունեցած «Ա դասի գոտու պրոֆեսիոնալ առաջնությանը», գրավել առաջին տեղը և գոտիների շարքը համալրել սպիտակ գոտիով:

Մկրտիչը վստահ է, որ ավելի շատ բարձունքների կհասնի իր աշխատասիրության և նման մարզչի շնորհիվ:

Գոհար ԹՈՐՈՍՅԱՆ
Հեռուստառադիոլրագրության բաժնի 4-րդ կուրսի ուսանող

Խեժեգործությունից խեցեգործություն

«Ազատություն, մտքի և էմոցիաների ստեղծագործություն»,-այսպես է նկարագրում խեժի հետ իր աշխատանքը Լուիզա Բալասանյանը: Մասնագիտությամբ տնտեսագետը ինքն էլ չհասկացավ, թե ինչպես սկսեց զբաղվել խեժով և այն վերածել արվեստի:

«Միշտ հետաքրքիր էր, թե դա ինչ նյութ է և ինչպես են դրանով աշխատում: Կարդալով, դիտելով հոլովակներ խեժի մասին՝ մի օր որոշեցի սկսել, գնեցի ամեն ինչ՝ բաժակի տակդիր պատրաստելու համար, և այդ օրվանից իմ կյանքում փոխվեց ամեն բան»,-մեզ հետ զրույցում պատմում է Լուիզան:

Նրա խոսքով, խեժի հետ աշխատանքի առաջին փորձը բավականին հաջող է ստացվել, և նա սիրահարվել է արվեստի այդ ճյուղին ու որոշել գիտելիքներն ամրապնդելու համար դասընթաց անցնել:

«Անցած ուղին հեշտ չի եղել, ամեն բան ինքս եմ արել՝ տրամադրելով բավականին ժամանակ, էներգիա և ռեսուրս, ու այսօր արդեն ստեղծել եմ իմ ոճը և զգում եմ, որ դա մարդկանց դուր է գալիս»,-շարունակում է խեժեգործը:

Լուիզան այսօր խեժից անցել է խեցեգործության: «Խեժի հետ աշխատելու ընթացքում սկսվեց սուր խրոնիկ ալերգիա, ինչի պատճառով ստիպված էի թողնել սիրածս գործը, սակայն չէի կարող ստեղծագործական մտքերս անավարտ թողնել: Արդյունքում որոշեցի զբաղվել խեցեգործությամբ»,- նկատում է Լուիզան՝ հավելելով, որ կավը թույլ է տալիս ստեղծագործել և իրականացնել ցանկացած մտահղացում:

Լուիզան ինստագրամյան հարթակում ունի ինը հազար հետևորդ, որտեղ ներկայացված են իր բոլոր աշխատանքները: Նա նշում է, որ հարթակում ակտիվություն սկսել է ցուցաբերել 1,5 տարի առաջ, բայց որպես բլոգ՝ էջը սկսել է վարել, երբ արդեն խեժի արվեստով ավելի լուրջ էր զբաղվում:

«Փորձեք ամեն բան անել ինքներդ, եղեք ինքնուրույն. դա ձեզ ավելի կուժեղացնի»,-ստեղծագործող երիտասարդարդներին խորհուրդ է տալիս Լուիզան:

Անանա ԲԱԲԱԼԱՐՅԱՆ
Հեռուստառադիոլրագրության բաժնի 4-րդ կուրսի ուսանող

«Մարդահրավեր»

Մանկավարժական համալսարանի Ուսանողական խորհուրդը շուրջ 30 տարվա իր գործունեության ընթացքում բազմիցս համագործակցել և շարունակում է համագործակցությունն անհատների, կազմակերպությունների, բուհերի հետ, որի արդյունքում իրականացվել են ուսանողների սիրելի միջոցառումները, սեմինարներն ու քննարկումները:

Այս անգամ աբովյանականները մեկնարկել են նոր նախագիծ՝ միջոցառումների շարք, որը կոչվում է «Մարդահրավեր»: Այս ծրագրի շրջանակներում Մանկավարժական համալսարանում կհյուրընկալվեն մշակութային տարբեր գործիչներ, որոնց հետ մասնակիցները կունենան բովանդակային ու հետաքրքիր հանդիպում-միջոցառումներ:

Ծրագրի անդրանիկ հանդիպումը տեղի ունեցավ դեկտեմբերի 19-ին: Մեր հյուրը դերասան, երգիչ, երգահան, բեմադրիչ Հայկ Պետրոսյանն էր: Հայկը տիրապետում է կիթառի և դաշնամուրի, նվագել սովորել է ինքնուրույն և մեզ հյուրընկալվել էր՝ իր հետ բերելով կիթառը:

Ներկա էին ուսանողներ համալսարանի 10 ֆակուլտետներից: Հյուրը ուսանողների համար կատարեց մի քանի երգ, այնուհետև ուսանողների և դերասանի միջև հարցուպատասխանի ձևաչափով հաճելի զրույց ընթացավ: Որպես ավագ ընկեր՝ Հայկը խորհուրդներ տվեց, խոսեց իր ուսանողական տարիների մասին, պատմություններ հիշեց:

Ըստ ծրագրի ձևաչափի՝ միջոցառման ավարտին մեր հյուրը պետք է առաջարկի, թե ում հյուրընկալենք հաջորդ անգամ, և հանդիպման ավարտին Հայկ Պետրոսյանն առաջարկեց հաջորդ հյուրին, որի հետ էլ կհանդիպենք հաջորդ «Մարդահրավեր» միջոցառման ընթացքում:

Հետաքրքիր մարդկանց հետ հանդիպումների մեկնարկը տրված է:

Ժենի ԱԲԳԱՐՅԱՆ

Ամանորին ընդառաջ



Մանկավարժական համալսարանի տարեվերջը հագեցած էր ամանորյա միջոցառումներով: Աշակերտական խորհրդի նախաձեռնությամբ հետաքրքիր ծրագիր ներկայացրին դպրոցի 5-9-րդ դասարանների աշակերտները՝ գեղարվեստական գեղեցիկ կատարումներ կիթառով, քանոնով, դիոլով, դաշնամուրով, սաքսոֆոնով, որին հաջորդեցին ասմունքը, երգն ու պարը, ներկայացվեց բեմադրություն:

Յուրաքանչյուր աշակերտի ասելիք լի էր խաղաղության ձգտումով. երեխաները «ո՛չ» ասացին պատերազմին, մաղթեցին ազգերի միավորում, սգավոր մայրերին էլ՝ սուգ ու տխրությունից զերծ տարիներ...

Արի՛ Նոր տարի, սպասում եմ քեզ,
Այնպե՜ս եմ ուզում, որ այս Նոր տարում
Լինի միայն սեր, ժպիտ, խնդությո՜ւն,
Որ էլ չլինի կռիվ, պատերազմ,
Որ մայրերը երբեք չտխրեն, սգան,
Այրված սրտերից արցունք չքամվի,
Թող միավորվեն ազգերը բոլոր,
Բաժակ բաժակի զարկեն ու խնդան,
Նոր կյանքի շնչով ծնվեն, մանկանան:

Միջոցառմանն իրենց կատարումներով մեծ շուք հաղորդեցին իններորդցի Նարեկը, Սուսաննան ու Մերին, հինգերորդցի Նարեկը, ռիթմիկ պարերի կատարումներով հիացրին 6-րդ դասարանի աղջիկները, մյուս վեցերորդցիներն էլ ներկայացրին գեղեցիկ երգեր, աչքի ընկան երաժշտական գործիքային կատարումներով:

Ամանորյա Դինգ-դոնգ երգի կատարում, «Վաղարշապատ» պար... Աշակերտական բոլոր կատարումներն աչքի էին ընկնում անկեղծ ու ջերմ ելևէջներով:

Սովորողները դպրոցի մեկ օրը տոնական դարձրին՝ ամանորյա ջերմություն հաղորդելով ուսուցիչներին ու դպրոցի սաներին: Տոնը՝ տոն, իսկ արտադպրոցական յուրաքանչյուր միջոցառում ճաշակ է ձևավորում, լրացնում գիտելիքների ձեռքբերման ընթացքը, նոր գույներ հաղորդում դպրոցական առօրյային:

Դե ինչ, թող այս տարվա Ամանորը միայն խաղաղություն ու ժպիտներ պարգևի, այլևս պատերազմ ու արցունք չտեսնեն հայ մայրերը, սերն ու ջերմությունը թևածեն հայոց աշխարում ու բոլոր մանուկների սրտերում:

ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ

Մոսկվայի «Վերածնունդ» կիրակնօրյա դպրոցի սովորողները ներկայացրին Ամանորի հեպաքրքիր պոնական ծրագիր

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է:
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ